ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ kotayk@mta.gov.am

24.05.2013թ N

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Ձերմ բարեմաղթանքներով շնորհավորում եմ Հանրապետության տոնի առթիվ:

Մայիսի 28-ը համարվում է հայ ժողովրդի կարևորագույն ու նվիրական երազանքի իրականացման խորհրդանիշը, քանզի դարավոր պայքարի արդյունքում կազմավորվել է առաջին հայկական հանրապետությունը:

Այս տոնը խորհրդանշում է ազատ և անկախ հայրենիք ունենալու մեր համազգային իղձերի դրսևորումներն ու ազդարարում հայ տեսակի ուրույն նկարագիրը:

Հանրապետության տոնի կապակցությամբ ինչող շնորհավորանքների հետ մեկտեղ՝ հաջողություններ մաղթելով հայրենի պետականության զարգացման և հզորացման պատասխանատու գործին, ցանկանում եմ, որ ավելի ուժեղ հայրենիքի կայացմամբ՝ իրականանան համայն հայության երազանքները:

Մայիսյան տոների հաղթական շարքն ամփոփող այս պատմական օրվա առիթով կրկին շնորհավորում եմ և ցանկանում ամենայն բարիք:

**Հարգանքներով**

Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ